պատասխանի · ըստ հրամանի Արքային գիտութեամբ ամենեցունցս և օրինօք դատարանի երկու ազգք բաժանորդեղեն · գրեցան Իլամ և Հէօճճէթ և առաքեցան առ Տէրութիւնն և 'ի Դամասկոս, բայց յայտնեցանէ ոչ ինչ գիտեմ և ոչ ինչ գրեմ: Եւ ապա կոչեալ առանձին զՍտեփան Բղեչխին՝ պատուիրէ նմա չքրքրել զխնդիրն՝ զի Սուլթան Մահմուտ ինքնին վերակացու լեալ է գործոյս · որպէս աքսորեաց զնախորդն իմ 'ի Մավուսայ, և ես երկնչիմ գործել հակառակ հրամանի նորին · զի եթէ երկու ազգք սակս աւելի և պակաս իրաց ունին դատս ինչ, զայն ևս լսեմք և զստոյգն գրեմք Կուսակալին, այժմ ոչ ամբաստանող և ոչ նորաստեղծման իր ինչ տեսանի: Ի սոյն միտս գրեաց նաև առ Կուսակալն, այլ չեղեւ յայտնի թէ զի՞նչ գրեաց Քաղաքապետն: Սակայն Դատաւորն կոչեաց առանձին ըղՅոյնս և առաջի եդ զօգուտ և զվնաս դանկատաւոր լինելոյն նոցա առ Բղեչխն · և նոքա մեծաւ երդմամբ հաստատէին թէ չէին գրեալ բան ինչ՝ զի չէր օգուտ, մանաւանդ չէին մոռացեալ զդառնութիւն նորին՝ զոր ճաշակեցին յառաջին նուագին · զի՞րդ փութասցին միւսանգամ անկանիլ 'ի ծուղակս նորա, թէպէտ կամեցին զտուգանելն Հայոց այլ ինքեանք առաւել քան զնոսա վնասէին, այսպիսի բանիւք թագուցին զնենգութիւնս իւրեանց, ('ի 21 Փետրվարի):

Թէպէտ և գրեաց յայնժամ Դատաւորն պատշաճաւոր պատասխանի գրոց Կուսակալին, այլ նա ոչ հանդարտեալ՝ վերստին գրեաց առ մեծամեծս քաղաքին եւ առ Դատաւորն, ընդ որս էր եւ Տումար ('ի 10 Մարտի): Կոչեաց Դատաւորն զՓոխանորդն և զԹարգմանն, զԴիոնէսիոս եւ զՊոտուռեան Գէորգ և ընթերցաւ առաջի նոցա զգրեանսն, յոր ասէր՝ խռովութիւնք քրիստոնէից վասն եկեղեցեաց և Ս. Տեղեաց Երուսաղէմի ձանձրացուցին զԹագաւորն 'ի լսել զդատաստանս նոցա · զի ոչ կամէին շատանալ բնականին, սորին վասն Կուսակալք Դամասկոսի ըղգուշութեամբ արգելեալ էին զնոսա չառնել ինչ ըստ կամաց իւրեանց, որպէս եւ մեք առնէաք · այլ յուղեւորիլ մերում 'ի Մէքքէ, Հայք պատեհ առիթ գտեալ եւ յագահութենէ ոմանց համարձակութիւն առեալ, սահմա-